ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ - ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 16

ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 20.12.2014Թ. ԹԻՎ 4137-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալի 05.05.2023թ. «Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող անձանց աշխատողների հատուկ պատրաստության ծրագիրը և ստուգարքներ անցկացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 14-Լ հրամանով հաստատված հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների հատուկ պատրաստության ստուգարքներ անցկացնելու կարգի 11-րդ կետը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ, 37-րդ հոդվածների և ՀՀ ներքին գործերի նախարարի 2023թ. մարտի 14-ի «ՀՀ ՆԳՆ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանով հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների հատուկ պատրաստության ստուգարքներ անցկացնելու թեստային հարցաշարը՝ համաձայն հավելված 1-ի,

2) հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների հատուկ պատրաստության ստուգարքներ անցկացնելու թեստային առաջադրանքի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ ոստիկանության պետի 20.12.2014թ. «Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների կողմից զենքի շրջանառության մասին ՀՀ օրենսդրական ակտերի իմացության պարբերական ստուգման թեստային հարցաշարը հաստատելու մասին» թիվ 4137-Ա հրամանը:

3. ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա.Ահարոնյանին՝ հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատողների հատուկ պատրաստության ստուգարքներ անցկացնելու թեստային հարցաշարը տեղադրել ՀՀ ոստիկանության http://www.police.am ինտերնետային կայքում:

4. Հրամանը ծանոթացնել ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«01» 06 2023թ.
ք.Երևան

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության
ոստիկանության պետ-ներքին
գործերի նախարարի տեղակալի
« 01 » հունիսի 2023 թ.
թիվ 16 -Լ հրամանի

ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԹԵՍՏԱՅԻՆ ՀԱՐՑԱՇԱՐ

1. Ո՞ր իրավական ակտով է կարգավորվում զենքի հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում:

1. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով.
2. ՀՀ Քրեական օրենսգրքով.
3. ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով:

2. Ի՞նչ են կոչվում իրենց կառուցվածքով կենդանի կամ այլ նշանակետ խոցելու և վնասազերծելու համար նախատեսված սարքերն ու առարկաները:

1. զենք.
2. ռազմամթերք.
3. հրազեն:

3. Ի՞նչ են կոչվում նշանակետը խոցելու համար նախատեսված առարկաները, սարքերը և նետվող հարմարանքները, որոնք պարունակում են պայթուցիկ, նետողական, հրատեխնիկական, արտամղիչ լիցքեր կամ դրանց համակցություն:

1. ռազմամթերք.
2. փամփուշտ.
3. հրազեն:

4. Ի՞նչ է կոչվում զենքից կրակելու համար նախատեսված համասարքը, որը պարկուճի միջոցով մեկ ամբողջության մեջ ներառում է բռնկվող միջոց (հրապատիճ), նետողական լիցք և նետվող հարմարանք:

1. փամփուշտ.
2. ռազմամթերք.
3. արկ:

5. Ըստ համապատասխան սուբյեկտների կողմից օգտագործման նպատակայնության, ինչպես նաև հիմնական չափանիշների և բնութագրող հատկանիշների՝ քանի՞ տեսակի է լինում զենքը:

1. քաղաքացիական, ծառայողական և ձեռքի մարտական հրաձգային.
2. ողորկափող, ակոսափող և սառը շեղբավոր.
3. սպորտային, որսորդական և ինքնապաշտպանական:

6. Ո՞վ է սահմանում հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց աշխատակիցների կողմից օգտագործվող քաղաքացիական և ծառայողական զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը

1. ՀՀ կառավարությունը.
2. ՀՀ ոստիկանությունը.
3. ՀՀ արդարադատության նախարարությունը:

7. ՀՀ քաղաքացիներն օրինական հիմքով իրենց մոտ գտնվող զենքը ո՞ր դեպքում կարող են գործադրել:

1. միայն անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում.
2. իրենց օրինական պահանջը չկատարելու դեպքում.
3. քաղաքացու իրավունքները ոտնահարելու դեպքում:

8. Զենք գործադրելուց առաջ ի՞նչ պետք է հայտարարեք այն անձին ում նկատմամբ պատրաստվում եք զենք գործադրել, բացառությամբ այն դեպքերի, երբ գործադրման ձգձգումը կարող է անմիջական վտանգի տակ դնել մարդկանց կյանքը կամ առաջացնել այլ ծանր հետևանքներ:

1. պարզորոշ նախազգուշացնել.
2. գրավոր նախազգուշացնել.
3. հայտարարել իրավունքները:

9. ՈՒ՞մ նկատմամբ է արգելվում հրազեն գործադրել, եթե նրանց կողմից չկա զինված կամ խմբակային հարձակում կամ զինված դիմադրություն:

1. կանանց, հաշմանդամության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների.
2. իրավապահ մարմինների ծառայողների.
3. ազգային ժողովի պատգամավորների:

10. Թույլատրվու՞մ է արդյոք, հրազեն գործադրել մեկից ավելի կանանց, հաշմանդամության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների հարձակման դեպքում:

1. այո.
2. ոչ.
3. իրավիճակից ելնելով՝ որոշում է զենք գործադրողը:

11. Թույլատրվու՞մ է, արդյոք, հրազեն գործադրել մարդկանց զգալի կուտակումների ժամանակ:

1. ոչ.
2. այո.
3. իրավիճակից ելնելով որոշում է զենք գործադրողը:

12. ՈՒ՞մ է պարտավոր հայտնել զենք գործադրողը զենքի գործադրման յուրաքանչյուր դեպքի մասին, ինչի հետևանքով մարդու առողջությանը վնաս է պատճառվել:

1. ոստիկանությանը.
2. դատախազությանը.
3. քննչական կոմիտե:

13. Ի՞նչ ժամկետում է պարտավոր զենք գործադրողը, ինչի հետևանքով մարդու առողջությանը վնաս է պատճառվել, հայտնել ոստիկանությանը:

1. անհապաղ, բայց ոչ ուշ, քան քսանչորս ժամվա ընթացքում.
2. անհապաղ, բայց ոչ ուշ, քան տասներկու ժամվա ընթացքում.
3. դեպքի վայրի պատշաճ պահպանումն ապահովելուց հետո:

14. Ո՞ր օրենսգրքով են սահմանված «Անհրաժեշտ պաշտպանությունը» և «Ծայրահեղ անհրաժեշտությունը»:

1. ՀՀ Քրեական օրենսգրքով.
2. «Զենքի շրջանառության կարգավորման մասին» ՀՀ օրենքով.
3. ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով:

15. Ի՞նչ է կոչվում այն գործողությունը, որը կատարվում է պաշտպանվողի կամ այլ անձի կյանքը, առողջությունը, իրավունքները, ազատությունները, օրինական շահերը, հասարակության կամ պետության օրինական շահերը սույն օրենսգրքով նախատեսված հակահիրավական ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս:

1. Անհրաժեշտ պաշտպանություն.
2. Ծայրահեղ անհրաժեշտություն.
3. Հրաման կամ կարգադրություն կատարել:

16. Ի՞նչ է կոչվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը, որն ուղղված է եղել տվյալ անձի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը, իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին անմիջականորեն սպառնացող վտանգը վերացնելու համար, եթե տվյալ իրադրությունում այդ վտանգը չէր կարելի վերացնել այլ միջոցներով:

1. Ծայրահեղ անհրաժեշտություն.
2. Անհրաժեշտ պաշտպանություն.
3. Հրաման կամ կարգադրություն կատարել:

17. «Անհրաժեշտ պաշտպանությունը» ՀՀ Քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածով է սահմանված:

1. 32-րդ հոդված.
2. 44-րդ հոդված.
3. 46-րդ հոդված:

18. «Ծայրահեղ անհրաժեշտությունը» ՀՀ Քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածով է սահմանված:

1. 34-րդ հոդված.
2. 46-րդ հոդված.
3. 42-րդ հոդված:

19. « Զենքի, ռազմամթերքի, ռազմական տեխնիկայի կամ ռազմական այլ գույքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերի, սարքերի կամ առարկաների հետ վարվելու կանոնները խախտելը» ՀՀ Քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածով է սահմանված:

1. 532-րդ հոդված.
2. 235-րդ հոդված.
3. 237-րդ հոդված:

20. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի տրամաչափը:

1. 9 մմ.
2. 7,62 մմ.
3. 12 մմ:

21. Որքա՞ն է չլիցքավորված «Մակարով» տեսակի ատրճանակի քաշը:
1. 730 գրամ.
2. 810 գրամ.
3. 920 գրամ:

22. Որքա՞ն է լիցքավորված «Մակարով» տեսակի ատրճանակի քաշը:
1. 810 գրամ.
2. 730 գրամ.
3. 920 գրամ:

23. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի երկարությունը:
1. 161 մմ.
2. 126 մմ.
3. 156 մմ:

24. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի բարձրությունը:
1. 126,75 մմ.
2. 161,15 մմ.
3. 156,12 մմ:

25. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի փողի երկարությունը:
1. 93 մմ.
2. 98 մմ.
3. 97 մմ:

26. Քանի՞ ակոս ունի «Մակարով» տեսակի ատրճանակի փողը:
1. 4 ակոս.
2. 6 ակոս.
3. 8 ակոս:

27. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի պահունակի տարողությունը:
1. 8 փամփուշտ.
2. 7 փամփուշտ.
3. 16 փամփուշտ:

28. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի փամփուշտի քաշը:
1. 10 գրամ.
2. 6.1 գրամ.
3. 7.62 գրամ:

29. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի գնդակի քաշը:
1. 6.1 գրամ.
2. 10 գրամ.
3. 7.62 գրամ:

30. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի փամփուշտի երկարությունը:

1. 25 մմ.
2. 29 մմ.
3. 32 մմ:

31. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի գնդակի նախնական արագությունը:

1. 315 մ/վրկ.
2. 350 մ/վրկ.
3. 420 մ/վրկ:

32. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի փողային էներգիան:

1. 350 ջոուլ.
2. 315 ջոուլ.
3. 420 ջոուլ:

33. Առավելագույնը քանի՞ կրակոց է արձակում «Մակարով» տեսակի ատրճանակը 1 րոպեում:

1. 30 կրակոց.
2. 16 կրակոց.
3. 22 կրակոց:

34. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի նշանառու հեռավորությունը:

1. 50 մետր.
2. 25 մետր.
3. 100 մետր:

35. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի հեռահարությունը:

1. 350 մետր.
2. 150 մետր.
3. 50 մետր:

36. ՈՒ՞մ նկատմամբ է արգելվում հատուկ միջոցներ գործադրել, եթե նրանց կողմից չկա զինված կամ խմբակային հարձակում կամ զինված դիմադրություն:

1. հղիության նկատելի նշաններ ունեցող կանանց, հաշմանդամների, անչափահասների.
2. իրավապահ մարմինների ծառայողների.
3. ազգային ժողովի պատգամավորների:

37. Հատուկ միջոցը գործադրելուց առաջ որքա՞ն ժամանակ է պետք տրամադրել իրավախախտին, եթե կյանքի և առողջության սպառնալիք չկա:

1. բավարար ժամանակ.
2. ողջամիտ ժամանակ.
3. 5-10 րոպե ժամանակ:

38. Թույլատրվու՞մ է, արդյոք, հատուկ միջոց գործադրել մեկից ավելի հաշմանդամների, անչափահասների կամ հղի կանանց հարձակման դեպքում:

1. այո.
2. ոչ.
3. իրավիճակից ելնելով՝ որոշում է հատուկ միջոց գործադրողը:

39. Մարմնի ո՞ր մասերին է արգելվում ռետինե մահակով հարվածել:

1. գլխին, պարանոցին, որովայնին և սեռական օրգաններին.
2. աչքին, ականջին, արևային հանգույցին և ծնկահոդին.
3. քթին, ծոծրակին, ստամոքսին և երիկամներին:

40. Ինչի՞ համար է նախատեսված ռետինե մահակը:

1. ինքնապաշտպանության և կանխարգելիչ գործողություններ իրականացնելու.
2. իրավախախտի ակտիվ ֆիզիկական գործողությունները սահմանափակելու.
3. իրավախախտին կարգի հրավիրելու:

41. Ի՞նչ հաճախականությամբ է ստուգվում ձեռնաշղթայի փականների վիճակը և անհրաժեշտության դեպքում՝ թուլացվում:

1. երկու ժամը մեկ.
2. ժամը մեկ.
3. 10-15 րոպեն մեկ:

42. Ինչի՞ համար է նախատեսված ձեռնաշղթան:

1. իրավախախտի ակտիվ ֆիզիկական գործողությունները սահմանափակելու.
2. ինքնապաշտպանության և կանխարգելիչ գործողություններ իրականացնելու.
3. իրավախախտին բերման ենթարկելու:

43. Բնակավայրերից, հանգստի գոտիներից և ավտոմայրուղիներից ի՞նչ հեռավորության վրա է թույլատրվում ակոսափող որսորդական հրազեն օգտագործել:

1. 5000 մետր.
2. 3000 մետր.
3. 500 մետր:

44. Բնակավայրերից, հանգստի գոտիներից և ավտոմայրուղիներից ի՞նչ հեռավորության վրա է թույլատրվում ողորկափող որսորդական հրազեն օգտագործել:

1. 500 մետր.
2. 300 մետր.
3. 100 մետր:

45. Ինչպիսի՞ պատասխանատվություն է նախատեսվում բնակավայրերում և դրա համար չհատկացված տեղերում կամ սահմանված կարգի խախտումով հրազենից կրակելու համար:

1. վարչական.
2. քրեական.
3. քաղաքացիական:

46. Ինչպիսի՞ պատասխանատվություն է նախատեսվում զենք պահելու թույլտվություն ունեցող քաղաքացիների կողմից զենքն ու զինամթերքը պահելու կամ փոխադրելու կանոնները խախտելու համար:

1. վարչական.
2. քրեական.
3. քաղաքացիական:

47. Ինչպիսի՞ պատասխանատվություն է նախատեսվում հրազենի գրանցման (վերագրանցման) ժամկետները կամ հաշվառման վերցնելու կանոնները խախտելու համար:

1. վարչական.
2. քրեական.
3. քաղաքացիական:

48. «Հրազենից կրակելը բնակավայրերում և դրա համար չհատկացված տեղերում կամ սահմանված կարգի խախտումով» ՎԻՎ ՀՀ օրենսգրքի ո՞ր հոդվածով է սահմանված:

1. 173-րդ հոդված.
2. 191-րդ հոդված.
3. 192-րդ հոդված:

49. «Հրազենը և զինամթերքը պահելու կամ փոխադրելու կանոնները խախտելը» ՎԻՎ ՀՀ օրենսգրքի ո՞ր հոդվածով է սահմանված:

1. 191-րդ հոդված.
2. 192-րդ հոդված.
3. 173-րդ հոդված:

50. «Հրազենի գրանցման (վերագրանցման) ժամկետները կամ հաշվառման վերցնելու կանոնները խախտելը» ՎԻՎ ՀՀ օրենսգրքի ո՞ր հոդվածով է սահմանված:

1. 192-րդ հոդված.
2. 191-րդ հոդված.
3. 173-րդ հոդված:

51. Փամփուշտը չկրակվելու դեպքում քանի՞ վարկյանից հետո է թույլատրվում բացել զենքի փակաղակը:

1. 5 վարկյանից ոչ շուտ.
2. 10 վարկյանից ոչ շուտ.
3. 20 վարկյանից ոչ շուտ:

52. «Հրազենի, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի կամ պայթեցման սարքերի պահպանության պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը» ՀՀ Քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածով է սահմանված:

1. 337-րդ հոդված.
2. 532-րդ հոդված.
3. 255-րդ հոդված:

53. Թույլատրվու՞մ է, արդյոք, ինքնուրույն կատարել զենքի բաղկացուցիչ մասերի և հանգույցների վերանորոգում, նրանց մեջ մտցնել կառուցվածքային փոփոխություններ:

1. չի թույլատրվում.
2. թույլատրվում է.
3. անհրաժեշտությունից ելնելով:

54. Ի՞նչ հեռավորությունից է արգելվում գազային զենք կիրառել:

1. 3 մ-ից պակաս հեռավորության վրա.
2. 3.5 մ-ից պակաս հեռավորության վրա.
3. 4 մ-ից պակաս հեռավորության վրա:

55. Ո՞ր դեպքերում է արգելվում գազային զենք գործադրել:

1. հանդիպակաց բամու ժամանակ և սահմանափակ տարածքում.
2. հասարակական վայրերում.
3. պահպանվող օբյեկտներում:

56. Ինչպիսի՞ առաջին օգնություն է ցուցաբերվում վերին և ստորին վերջույթների զարկերակային արնահոսության ժամանակ:

1. դրվում է լարան.
2. դրվում է սեղմող վիրակապ.
3. վնասված մասը պահվում է սառը ջրի տակ:

57. Ինչպիսի՞ առաջին օգնություն է ցուցաբերվում ջերմային այրվածքների ժամանակ:

1. անմիջապես պահել սառը ջրի տակ.
2. մաքրել չոր շորով.
3. դնել տաք ջեռակ:

58. Ինչպիսի՞ առաջին օգնություն է ցուցաբերվում ցրտահարության ժամանակ:

1. տուժածին աստիճանաբար տաքացնել.
2. տուժածին միանգամից տաքացնել.
3. տուժածին տալ սառը հեղուկներ:

59. Ինչպիսի՞ առաջին օգնություն է ցուցաբերվում փակ կոտրվածքի ժամանակ:

1. անշարժացնել կոտրվածքից վերև և ներքև ընկած հոդերը.
2. անշարժացնել կոտրվածքից վերև ընկած հոդը.
3. դնել տաք թրջոց:

60. Ինչպիսի՞ առաջին օգնություն է ցուցաբերվում շնչառության կանգի ժամանակ:

1. կատարել արհեստական շնչառություն (ներփչումներ).
2. տուժածին տալ մեծ քանակությամբ հեղուկներ.
3. տուժածին ապահովել մաքուր օդով:

Ծանոթություն - ճիշտ են առաջինը թվագրված պատասխանները

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
ոստիկանության պետ-ներքին
գործերի նախարարի տեղակալի
«01» հունիսի 2023 թ.
թիվ 16-Լ հրամանի

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ №

_____
Անուն Հայրանուն Ազգանուն

_____
Կազմակերպության անվանումը

1. Հարց:

	1. Հնարավոր պատասխանի տարբերակ
	2. Հնարավոր պատասխանի տարբերակ
V	3. Ճիշտ պատասխան

2. Հարց:

	1. Հնարավոր պատասխանի տարբերակ
V	2. Ճիշտ պատասխան
	3. Հնարավոր պատասխանի տարբերակ

3. Որքա՞ն է «Մակարով» տեսակի ատրճանակի տրամաչափը:

V	1. Ճիշտ պատասխան
	2. Հնարավոր պատասխանի տարբերակ
	3. Հնարավոր պատասխանի տարբերակ

4. Հարց:

	1. Հնարավոր պատասխանի տարբերակ
V	2. Ճիշտ պատասխան
	3. Հնարավոր պատասխանի տարբերակ

5. Հարց:

	1. Հնարավոր պատասխանի տարբերակ
	2. Հնարավոր պատասխանի տարբերակ
V	3. Ճիշտ պատասխան

6. Հարց:

	1. Հնարավոր պատասխանի տարբերակ
	2. Հնարավոր պատասխանի տարբերակ
V	3. Ճիշտ պատասխան

« »_____20 թ. _____ Ստորագրություն _____ Ա. Ազգանուն